



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

of Omidyar

of Omidyar

891.99  
5-22



ՎԱՀՈՆ ՄԱՍԻԿՈՆԵՍՆ

*Հին և Նորաբանայ*

# ՎԵՐՋԻՆ ԵՐԳԵՐ

(ՈՉ ՍԿՍԵՆ, ԵՄ, ՈՉ ԷՆ, ԴԱԴԱՐԵՆ)

Ես իմ վիշաղ երգեցի,  
Որ ամենքի սրտումն էր,  
Բայց սրտիս ցուրդացի.  
Ա՛խ, այդ երգը շատ ծանր էր.  
Վ. Մ.

Հրատարակեց Արշակ Մամիկոնեան:

891.99  
Մ-22

Բ Ա Գ Ո Ւ  
Տպարան „ԱՐՕՐ“  
1903.

891.99

10 NOV 2011

Մ-22

*այդ*

ՎԱՀՍԵՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ.

44

# ՎԵՐՋԻՆ ԵՐԳԵՐ

(Ոչ սկսել եւ, ոչ էլ դադարել)

Ես իմ վիշաք երգեցի,  
Որ ամենքի սրտումն էր,  
Բայց սրտիս ցաւ զգացի.  
Ա՛խ, այդ երգը շնա՞ծանք էր.  
Վ. Մ.

Հրատարակեց Արշակ Մամիկոնեան:



Բ Ա Վ Ո Ի  
Տ Պ Ա Ր Ա Ն Ն Ա Ր Օ Ր  
1 9 0 3.

24 JUN 2013

41687

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԳՅՐԳԻՄՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Дозволено цензурою. 8 Марта 1903 года, г. Тифлисъ.



1095  
42.

I.

Հիւանդ եւ, մայրի՛կ...

Հիւանդ եմ, մայրիկ, աշխարհի ցաւով,  
Կամ երկրի զազանի անսահման վըշտով,  
Ել շատես ողջ են իմ անդամները.  
Մայր, ես հիւանդ եմ, կորաւ ,,այն սէրը“:

Ա՛խ, թէ՛ այլ ցաւով մուժ գերեզմանի  
Սնդունդի խորքն էլ մարմինս ընկնէր.  
Մայր, քեզ երդուամ եմ, որ դեռ կապրէի՛ր  
Թէկուզ և Փրկիչ, Աստուած չը լինէր:

Իմ ցաւըս, վիշտըս անդադար, անհուն  
Գարէզար ընկած կեանքի զազանիքն է.  
«Անկարեկցութիւն», ահա մի անուն,  
Որ սրտիս զեղի վըրայ գրուած է:

Ես այս աշխարհի սահմաններն ընկնայ,  
Ըստեղծուած կեանքի միտքն իմանալու.  
Ես մարդկանց սրբախ խորքերը մտայ,  
Նրանց գործերի սէրն ըմբռնելու.

Ես մանկան, հովին, լուսնին, աստղերին  
Մէկ—մէկ հարցրի նրանց անունը.  
Գարնան ու ձմռան ես ծագիկներին  
Ջնկ—ջնկ հարցրի նրանց հոտն ու գոյնը...

Ոչինչ չըզտայ, ոչինչ չիմացայ...  
Միայն մի հետց զարկեց իմ սրտին  
Եւ այդ օրուանից տեսնում եմ չըկայ  
Ո՛չ մի նսպատակ այս կեանքի միջին...

Հիւանդ եմ, մայրիկ, նեղ կեանքի ցաւով.  
Անմիտ է ծընուած մեր ցնորք — աշխարհ.  
Չարկում է սիրտըս ուժգին հեոցով,  
Մայրիկ, արցունքըդ ուժ չունէ, մի լար...



Ն Ր Ա Ն.

Աշխարհն ըստեղծեց, հալարտ զարգարեց,  
Ջանք ու տանջանքի այս մարդկանց լարեց,  
Առաջին օրից դարէդար զըցեց,  
Սրբի լոյսով, զարնան վարդերով,  
Անթիւ գեղեցիկ ցընորքով խաբեց.  
Եւ վերջը հաւարտ ու մահյլ գէմքով  
Իր խաղալիքը մահով սլտակեց...  
Ահա թէ ինչնու ինքնակամ Տէրը  
Կարծես թուել է լերի հեռուները:  
Եւ մենք էլ կասենք, թէ մի արարած  
Հէշ անսխալ չէ. — չիտակն է Աստուած:



ՉԷ՛, ՊԻՏԻ ԱՊՐԵՄ...

Չէ, պիտի ապրեմ. և բոլոր ուժից  
Թէկուզ ընկնելով, ես պիտի ապրեմ.  
Եւ թշուառութեան լիք ստիւնքներից  
Թոյնը քամելով, դարձեալ պիտ ապրեմ:

Ախր ամենքը մի անմիտ սիրով  
Եւ բորոտներն էլ ուզում են ապրել.  
Անմտութիւնն չէր եթէ իմ ձեռքով  
Ես կամենայի կեանքիս վերջ գնել...

Այո, և ոչ. այո՛, քանի որ  
Գեռ քաղցրութիւն կայ կեանքում լիզելու.  
Սիրտս կասէ ոչ. ոչ, քանի որ  
Այդ քաղցրութիւնն ինձ թոյն է դառնալու:

Բայց ես իմ սրտին ականջ չեմ դնում.  
Նա թող իր անվերջ «ոչ»-ը բարախէ.  
Ես մի այլ ուժով ապրե՛լ եմ ուզում,  
Որ իմ թշնամին այս դէպքից չ'օգտուէ:

Ի՜նչ խելք, եթէ որ երկու երազից  
Ընտրում ես մէկը իսպառ անհետեւ.  
Աւելի լաւ չէ որ միանգամից  
Նոյն կեանքն ընտրել, որ կապէ քեզ հետ.

Եւ ես ընտրում եմ այս կեանքը ռազմի,  
Որ նախ տանում է զիրկըն իմ երկրի.  
Այնտեղ կուսելու, անվերջ կուսելու  
Եւ այնտեղ անմիտ կեանքը ծաղրելու:





Մայրիկ, որբան ենք մենք տանջանք կրել,  
Կեանքի անհրաժեշտ կարիքն ըզգացել.  
Ես թեզ գրկելով միշտ յոյս եմ տուել,  
Իսկ դու ինձանից ծածուկ արտասուել:

Եզիկ են օրեր հաց չենք ունեցել,  
Շատ ժամանակ էլ ճրագ, վառելիք.  
Անօթի, քաղցած մի՞նու՞մն ենք մ'նացել.  
Սյուպէս է ազրիւ մեր խեղճ ընտանիք.

Յակօրն ասել է. — մայրիկ սոված եմ. —  
Ստողիկն էլ լալով. — եզրայր «չուտ» չունեմ... —  
Յակօրին ձեռքիս պատաւն եմ տուել.  
Ստողիկն էլ, մայրիկ, կօշիկդ է հագել:

Ախ, բարեկամներ շատ ենք ունեցել,  
Երբ մենք էլ մի ժամ հարուստ ենք եղել.  
Նրանք մեր տանը կերել են, խմել,  
Մեր ազ ու հացը խաղաւ մոռացել:



Ո՛հ, դաւար կեանք, դաւար կեանք  
Տրտունջ դառար, մեր սրտին.  
Մխ, սիլ տուաւ այս տանջանք  
Խղճուկ, անտէր որբերին:

Ես որբեր եմ խընամել  
Մանուկ օրից մինչ շիրիմ.  
Ինքըս էլ որբ եմ մ'նացել  
Սյս է գրուած իմ ճակտին:

Մենք շատ տանջանք ենք կրելի,  
Միշտ պոքշիւած մ'նացել.  
Իսկ թաթախման գիշերին  
Հաց ու սոխն էր մեզ բաժին:

Այս, արցունքով ճանր կլինի  
Թափենք առու—արցունքներ,  
Որ արցունքը մեր աղի  
Մաշէ մեր ցաւ տանջանքներ...

Չէ, արցունքը զին չունէ,  
Աղերսանքն էլ ամօթ է.  
Կեանքը ջանք է որոտում,  
Աշխատանքն է կեանք պահում:

Գու էլ, իմ կեանք, ընտանիք,  
Գալիպտերև իմ ծաղիկ,  
Պիտի սիրես աշխատանք,  
Որտեղ կապրէ և քն կեանք:



Պաղ ջրերը սարից կուգան,  
Արցունքներն էլ սրից կուգան...

Որքան սիրտըս նիհարի,  
Գարձեալ արցունք պիտ թափի,  
Իմ խեղճ կեանքը ցաւ ու սուգ  
Սիրտս էլ նրա արտասուք:

Ես հէնց մանուկ օրերից  
Կարծես արցունք սիրեցի—  
Եւ վիճակուած այդ կեանքից  
Միշտ լաց ու կոծ լսեցի:

Ես ցաւերս ժողվեցի,  
Մարդկանց պատմել ուզեցի.  
«Մարդիկ, գարձն, կանչեցին»—  
«Ցաւն ու վիշտը զին չունին».

Գարուն, գարուն, հէ, գարուն

Սիրտս դառաւ ջուր-արուն.

Որին բաժին դու ընկար,

Քո երգիչին մտացար,

Ո՞ր հարուստը քեզ խըլեց,

Ո՞ր կոպիտը քեզ ճեպուեց.

Կամ հարադատ եզրայրը

Քեզ ի՞նչ սրտով սեցրեց.

Է՛, ես գարուն չեմ տեսել,

Լացող կեանքում եմ ապրել,

Անբիժ անլժք իմ կեանքին,

Որ շատ խորթ է ամենքին:



ՄԱ. Հ. ՎՐԷԺ. ԱՆԷԾՔ:

Լեռների կշռով սեցած ձանձրոյթը

Կրծքիս շընթունել մի ժայռ է կտրել.

Հեշտանք հովերի թեթևութիւնը,

Թըռել է, վիշտը նեղ սրտիս թողել:

Այս ծանրութեան տակ փամփուշտի նման

Սիրտը թելերով շնտ է տըռզղել,

Է՛, մատաղ կեանքում ինձ խորթ գերեզման

Ժըպտում է գէմքիս, ուզում է խաբել:

Գիտեմ, աստղերը էլ ինձ յոյս չեն տալ.

Ոչ էլ հովերը կեանքի մի հեշտ շունչ.

Այո, և ես էլ երկար չեմ մընալ.

Կերթամ ա՛յն խորշը, մեռած ու անշունչ:

Կերթամ գերեզման, կերթամ էլ ոչ գամ,

Կըտանեմ ցաւըս իմ սե քո հողին կտամ,

Որ այրուող սիրտըս մի օր վինջանայ,

Թէկուզ այդ օրը գարիբ էլ գառնայ:

Ա՛խ, այնտեղ խոնաւ, նեղ, խաւար, մթին  
Հափող ու խայթող մրջինն, ճիճուններ.  
Պիտի ծակծրկեն իմ մատաղ մարմին,  
Ինչպէս արբեչում և սև մըզմուզներ:

Օ՛, այնտեղ նաև մի օր ևս կըզայ  
Հարազատ ծընուած իմ նենգ թըշնամին.  
Եւ այն խորշումն էլ ինձ հետ կըմնայ.  
Ա՛խ, նա մըզմուզի մայրն է իմ սրտին:

Ո՛հ, ես նրա հետ չեմ կարող մընալ.  
Կամ մահ, կամ թէ կեանք, մէկը թող ընտրէ.  
Միայն իմ կողքին դինջ հանգստանալ  
Ես չեմ թողնիլ որ թշնամիս պառկէ:

Է՛, մահը կեանքում մի սև՝ Աստուած է.  
Քընքուշ և կոպիտ, կէս խելք, անխըտիր,  
Հէնց նոյն մութ խորշն էլ նա գլորում է  
Մանկան պէս մարդկանց, հոգով սիրալիր:



I.

Այս գետակի մով ափին  
Գերեզմանըս կըշինեմ.  
Գերեզմանիս չորս կողմին  
Վարդի թփեր կը տնկեմ:

Այս գետակից միշտ, անհոն  
Պիտ չ'բաժանուիմ, չ'զրկուիմ.  
Եւ շիրիմի ցնծութիւն  
Կայ, գետակը երբ գրկեմ...

Ինձ թողել են մի կտակ—  
Ազատ<sup>1)</sup> գետը հայրենի.  
Նրա անունն էլ, յիշատակ  
Ոչ մի օր էլ գին չունի:

<sup>1)</sup> Ազատ գետը Նրասիւայ մի վտակն է, որ կ'ըզսէ գեղամայ լեռ-  
ներէն:

## II.

Ես ի՛նչ անմեղ աղջիկ է.  
 Սրան հովերն են ծընել  
 Թէ պօէտի նուրբ սիրտն է,  
 Որ շնտ անուշ է սիրելի:

Սա որ մեռնի կ'թաղեն,  
 Թէ դարէդար կարտասուեն.  
 Թէ մարմինը ծաղկանց մէջ  
 Աստծուն անէծք կուզարկեն...



## III.

Ն Ո Ւ Է Ր

Սիրուն կոյսը սրտի ցաւ է,  
 Ներկուած նախշուն զոյներով.  
 Ով որ նրան «անմեղ» սիրէ,  
 Պիտ բռնկուէ վըշտերով:

Է՛յ, որ ինձի դու չըսես  
 Գրանես նրբան ու սիրես.  
 Գիտե՛մ, վաղ—ուշ մօտըս կըզաս,  
 Սրցունք թափես, հեկեկաս:



Օ Տ Ա Ր Ո Ւ Հ Ո Ւ Ն .

Ի՞նչ ես ուզում այ աղջիկ,  
Ջերմ արցունքով ինձանից-  
Որ քեզ գրրկեմ ըրնբուշիկ  
Սիրոյդ լինեմ մասնակից,

Ի՞նչ ես ուզում այ աղջիկ,  
Ախ—վախ տարով քո գլխին.  
Որ ես պոկեմ մի ծաղիկ,  
Աիրով կապեմ քո ճակտին.

Ի՞նչ ես ուզում այ աղջիկ,  
Գու փառք, պարծանք գեղութեան,  
Հրաշք—սիրոյ գու գափնիք,  
Գու պօջտի վեճ սրձան—

Որ ես խաչիկ ու մաշիկ  
Երկու ձեռքը քո առնեմ,  
Եւ գրլխաթէք մի պաշիկ  
Տամ, սիրունիս քեզ ասեմ...

Է՛, սիրելի այ աղջիկ  
Մեզ սարերը կ'ըրթենն,  
Որտեղ աղջիկ ու ծաղիկ  
Մառմառ հովով կըրուսենն:



Ի Մ Ս Է Ր Ը .

Վարդը սիրեմ ցօղը միջին,  
Արեւի շողը թերթին.

Կոյսին սիրեմ սէրը սրբառւմ  
Անմեղ ժպիտըն երեսին:

Պարտէզ մտնեմ, կոյսին տեսնեմ,  
Վարդ—թփի տակ ու սիրեմ  
Փունջ ծաղիկներ մընջիկ քաղեմ,  
Փափլիկ խփեմ լաց'ցնեմ:

Ապա թերմաշ կըրծքիս սեղմած  
Մունջ մեղեդին յօրինեմ.  
Եւ հրաժեշտըս երկրին տուած  
Եթերի մէջ բուրբեմ:



Կ Ո Յ Ս Ի Ն Ը Ս Ի . . . .

Կոյսին ըսի. — սիւզի թեւին թինկ տուած  
Եկ թեզ տանեմ իմ երկինքը մով բացուած,  
Որտեղ սէրը վիշտ ու թախիժ չէ ծնում,  
Նրբութիւնից ցնորքների է փոխում.

Կոյսը ժպտաց ու նայեց  
Փրփուրից նեղ ժրպիտով.  
Նրա ժրպիտն ինձ ծաղրեց.

Կոյսին ըսի. — մարդարիտը կ'հայուի,  
Երբ հրավառ քո աչքերին նա դիպչի.  
Ջուր խմելիս ով էլ մօտըդ որ լինէ  
Կուլիդ միջով ջուրն անցնելիս կ'տեսնէ.

Կոյսը յանկարծ արտասուեց,  
Բոցն աչերի հանդցրեց  
Ասաց. «կրբի սոսնն եմ».

Կոյսին ըսի. — թեզ երկինքը պիտ գրկէ,  
Վառ աստղերով, կտոր լուսնով, հովերով.  
Այս աշխարհը պիտի ողբայ, արտասուէ  
Անմեզ սիրայդ մի վայրկեանը լնդբելով.

Կոյսն անուշ կրկրչաց  
Ինչպէս դարնան մի վտակ  
Նա ինձ ասաց. «անճաշակ»...

Կոյսին ըսի. — թեզ կ'սիրեմ այնքան շատ,  
Որ Աստուածն էլ ինձի կ'սէ ապերախտ.  
Էլ չեմ գիտնալ թէ ո՞վ է թեզ ըստեղծել,  
Խենթի նման կասեմ Աստուած ես եղել:

Կոյսն էլ ասաց — տանջանքի  
Մայր — աստուածն եմ աշխարհում,  
Փախի՛ր ինձնից դու հեռի՛...  
*հատույթս: նայեցիս — բոլ*



Ո Ր Բ Ի Ս Է Բ Ը

Այս վարդը քեզ յիշատակ  
Մի արշալոյս անցեալի.

Պահիր սրան կըրծքիդ տակ,  
Նա այնտեղ հէշ չի թոռմի,

Ես շուտ սրան պոկեցի

Այս մայիսեան առաւօտ.

Տես թերթերը դեռ ցօղոտ

Քեզի նուէր բերեցի:

Գիտես, վարդն էլ մի սիրտ է,

Յօղ—արցունքում շաղախուած՝

Եւ այնքան էլ անուշ է

Բուրմունք.— սէրը տարածած:

Ես քեզ տեսայ երազում

Խանձարուրում փաթաթած

Եւ զիտեմ որ իմ կեանքում

Կեղնիս մանուկ արարած:

Այս վարդը քեզ յիշատակ

Իմ արշալոյս անցեալի.

Գրկիր սրան կըրծքիդ տակ

Նա այնտեղ որ չի թոռմի.

Իմ արշալոյս անցեալը

Սիրած մայրս էր որ մեռաւ.

Օ՛, շրջիտես այդ ցաւը

Ո՛րքան մրմունջ ինձ տուաւ:





Հ Ա Մ Բ Ո Ի Ր Է...․

Հայրենիքի վառ արևով  
Բուսած գոյն—գոյն վարդերը  
Նա քաղկե էր անուշ շուքով,  
Զարգաբեկ իր մազերը։

Հայրենիքի անուշ ջրով,  
Սեր ու մեղր կարագով,  
Նրա երեսը արիւն—կաթ էր,  
Իսկ աչերը վառ աստղեր։

Նա ծընունդ չէր մի արգանդի,  
Ցաւով, վոյսով, արտասուտով,  
Այլ ծընունդ էր ծաղիկների,  
Հովերի հետ համբուրտով։

Եւ ճիշտ նրան ծաղիկներն  
Էին ծընել հեշտանքով.  
Եւ մեղմանուշ զեփիւռները  
Շոյել, սղահել խնամքով։

«Համբուրէ», նա ինձ ասաց,—  
Բաւ է որքան արտասուես.  
Քո աչերը խոնաւ ու թաց,  
Հերիք է որքան դու լացես։

«Համբուրէ», տարէցտարի  
Եւ օրէցօր մի մաշուիլ.  
Ինձի համար սսկոր ու մորթ  
Պառած անվերջ մի տանջուիլ։

Համբուրէ, որ մարում եմ,  
Ել չես գրանիլ կոյս նման,  
Գրկէ ինձի, ես լծըչում եմ  
Նրանց մօտը ծերանամ... —

Խենթի նման առա նրան  
Եւ զըրկեցի այդ կոյսին,  
Նա չորացաւ ծաղկի նման  
Ծերցած ընկաւ իմ կրրծքին։



Օ Տ Ա Ր Ի Ն .

Ո՛վ օտարական գարուն չես տեսնում  
Մըշուշով պատած խաւար քան ձմեռ,  
Գու կեանքի ուրախ գրկումն ես ապրում  
Եւ միշտ պայծառ են քո օր ու գիշեր .

Յիշիր որ մի ժամ մենք ընկեր էինք  
Զոկ—ջոկ նաւակով ծովում լողալիս .  
Այժմ իմ նաւակ փըշրել են ալիք  
Եւ դու լողում ես էլ չես նայում ինձ :

Ինչո՞ւ ես մոռնում, որ այս գիժ ծովում  
Կարող է և քո նաւակը սուզուել .  
Եւ այն ժամանակ, ասա քո սրտում—  
«Արժէ որ կեանքի փրկութիւն կանչել .

Զէ, հպարտ ես դու, օտար նաւաստի .  
Այս ըսկզբունքը քեզ հէջ վին չունի .  
Մեծ ուժ ես տալիս, որ նաւդ տանես  
Քո հայրենիքի փառքին հասցնես :

Եկէք իմ ուժեր, ջրլատուած ուժեր,  
Ընկերքս գնաց, առաջ է լողում .  
Եկէք լողալով պատուներ ալիքներ,  
Թէկուզ նըստած չենք մենք մեր նաւակում :

Եկէք մեր այս ծով—կեանքի հոսանքը  
Մեր նիհար կրծքով ձեռներ ու յետ տանք .  
Նոր այն ժամանակ մեր անուշ կեանքը  
Փրկած, աղատած մենք հանգստանանք :



ՄՕՏԵՑԻՐ ԵՂՐԱՅԻ ԱՅՆ ՀԱՐԱՉԱՏԻՆ...

Մօտեցիր եղբայր այն հարազատին,

Որի ցաւերը դու բուժել կուզես՝

Լոկ խօսք ու գրչով մի յիշիլ խեղճին.

Գիր ձեռքդ սրտին, որ վերքը բուժես:

Մօտեցիր եղբայր այն հարազատին,

Որի երակը կանցնէ քո սրտով

Ե՛ւ սնունդ, եւ կեանք կը տայ քո սրտին,

Երբ սիրտըդ տանջուէ մի դաժան ցաւով:

Եղբայր, մենք ազնիւ մարդիկ կ'կոչուենք.

Անէժք ենք լսում—վիրաւորուած ենք.

Մեր եղբայրները կարօտ ու գրկուած

Մեզ անէժք կը տան հեռուն կուշ եկած:

Տներ ձեռքդ եղբայր մօտենանք խեղճին,

Մեր խեղճ հարազատ անտէր որբերին.

Հարցնենք նրան.— ինչո՞ւ կանիժես.

Նա դառանցով մեզ կասէ. «եղբայր ե՛ս...»

«Եղբայր... ո՞չ եղբայր, այս տանջանքները

«Իմ հատիկ կեանքը թերմաշ են արել.

«Օ՛, հեռուի եղբայր. այս բիւր ցաւերը

«Ինձ ոսկոր ու մորթ կմախք են դարձրել:

«Ա՛խ, մի գիր ձեռքըդ ցամաքած սրտիս,

«Տես նրա խորքում հէշ կեանքի շունչ կայ.

«Մարել է կեանքս, թուել է հոգիս.

«Միայն մի շունչ կայ որ անէժք կտայ...»

Եղբայր, այդ շունչն էլ գեռ կենդանի է.  
Որ խոր տներալով մունջ անէ՞ծք կըտայ  
Այն հարազատին, որ լուռ կ'մնայ,  
Կամ մօր արցունքին փոշի կ'ցանէ...

Մօտեցիր եղբայր քո հարազատին,  
Որի ցաւերը պէտք է գիտենաս՝  
Առ նրան գիրկդ, սեղմիր քո կրծքին,  
Եղբայր ջան ասա, որ հանգստանաս:



Ես նոր ծագած արեգակի վառ շողերը հիւսեցի  
Եւ մի պսակ կանաչ—կարմիր ճակտիդ սիրով կապեցի.  
Մի ամպ-վիշտ էլ սիրտ շունեցաւ որ մօտենար քո դէմքին.  
Աւանդ, այդ փառք գիտես որքան տանջանք տուաւ իմ  
սրտին:

Արեգակի լոյսը պակսեց երբ շողերը քաշեցի,  
Ողջ երկիրը խաւար պատեց, հանրային մեղք գործեցի.  
Քո լուսատու դէմքովը լոկ մութ արիր երկրին ջերմ տուիր,  
Իսկ ինձ համար, ճ, վիշտէակ պաղ ու պաղցած մնացիր,  
Քեզ արեւը իր շողերը հանեց դէմքից պըսակեց,  
Երբ զարդ եղար հօրիզօնի քեզ սլալ ախտեղ հասցրեց.  
Օ՛, անուշիկ ցնորք—թախիծ, հիթէ իրաւ սա սիր է,  
Թող որ սիրտըս սիրոյ զարկով գոնէ մի օր բարախտէ:



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to the bleed-through effect.



ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ.

1. Բանաստեղծութիւններ.
2. «Ցնորք և Կեանք» լեհական վէպ, [Թարգմ.]



ԹԱՐԳՄԱՆՈՒՄ ԵՆՔ.

«Իեօրն—Ուլ» գերմանական վէպ.



Հայաստանի Ազգային գրադարան



NL0432552

41688